ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
Արտիմետի
գյուղապետարան

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
Армавирский марз
община с. Артимет

057 կոդ 04704111 Հասցե Արմավիրի մարզ
գյուղ Արտիմետ
Հեռ. 4 - 76 - 01

N 46

_03 հոկտեմբերի 2012 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՄԱՐԶՊԵՏ

Հայտնում ենք Ձեզ, որ Արմավիրի մարզի Արտիմետ համայնքում 2012 թվականի սեպտեմբեր ամսին արձակվել է համայնքի ղեկավարի երկու կարգադրություն, իսկ ընդունվել է մեկ որոշում:

Առդիր 4 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ջ. Միրզախանյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 8609-12
«04» 10 2012 թ.

Հ Հ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
Արտիմետ համայնքի ղեկավարի
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N -----8-------

Հասցե. Արմավիրի մարզ
գյուղ Արտիմետ
Հեռ. 4-76-01

«----27----» սեպտեմբերի 2012 թ.

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՇԵՆՔ – ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արմավիրի մարզի, Արտիմետ համայնքի բնակիչներ՝ Արշակ Օհանի Միրզախանյանը և Լուսյա Լյուդմիկի Սահակյանը դիմել են Արմավիրի մարզի, Արտիմետ համայնքի Չարենցի 27 հասցեում գտնվող իրենց սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ սեփականաշնորհման հանձնաժողովի 13.03.1991թ. թիվ 5 որոշում) օրինական 0.168 հա տնամերձ հողամասի վրա ինքնակամ կառուցված բնակելի տունը և շենք շինությունները օրինականացնելու խնդրանքով, որը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ կառույցը իրականացվել է մինչև 15.05.2001թ., հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912 -Ն որոշման կարգով սահմանված և սույն որոշման 22-րդ կետի 1-ին ենթակետերով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, <<Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքով,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Վերականգնել Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի Չարենցի 27 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ քաղաքացիներ՝ Արշակ Օհանի Միրզախանյանի (ծնված 20/04/1938թ.) և Լուսյա Լյուդմիկի Սահակյանի (ծնված 01.05.1939թ.) գույքային իրավունքները՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը օրինական 0.168 հա հողամասի վրա մինչև 15.05.2001 թվականին կառուցված բնակելի տան և շենք – շինությունների նկատմամբ:

բնակելի տուն և շենք - շինությունները բավարարում են «Հայաստանի Հանրապետության համայնքային վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 1 և 2 հոդվածների պահանջները: Հողամասը չի ընդգրկված ՀՀ օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի ցանկում: Կառույցները չեն հակասում քաղաքաշինական նորմերի, չեն առաջացնում սերվիտուտ:

2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճար չի սահմանվում:
3. Շենք - շինությունների մակերեսները ենթակա են ճշտման համապատասխան որոկավորում ստացած անձի կողմից:
4. Առաջարկել ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ համապատասխան մարզային ստորաբաժանմանը գրանցել Արշակ Օհանի Միրզախանյանի (ծնված 20/04/1938թ.) և Լուսյա Լյուդվիկի Սահակյանի (ծնված 01.05.01939թ.) սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված օրինական հողամասի վրա ինքնակամ կառուցված բնակելի տան և շենք - շինությունների նկատմամբ տրամադրելով անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Զ. Միրզախանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐՏԻՄԵՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N ------8------

«----27----» սեպտեմբերի 2012 թ.

ԽՐԱԽՈՒՍԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի առաջին մասի « բ » ենթակետով, ծառայողական պարտականությունները բարեխղճորեն կատարելու համար.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար՝ Գայանե Սովսիսյանի նկատմամբ կիրառել խրախուսում՝ միանվագ դրամական պարգևատրում՝ 102 000 / հարյուրերկու հազար / դրամ:

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Համայնքի ղեկավար՝ Ա. Միրզախանյան

2012 թվական
սեպտեմբերի 27
գ. Արտիմետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐՏԻՄԵՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

N ------9------

«----27----» սեպտեմբերի 2012 թ.

ԽՐԱԽՈՒՍԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով, աշխատանքային պարտականությունները բարեխղճորեն կատարելու համար.

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետի գյուղական համայնքի ղեկավարի տեղակալ՝ Մանվել Սահակյանի նկատմամբ կիրառել խրախուսանք՝ միանվագ դրամական պարգև՝ 120 000 / հարյուր քսան հազար / դրամ:

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Համայնքի ղեկավար՝ Զ. Միրզախանյան

2012 թվական
սեպտեմբերի 27
գ. Արտիմետ